ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

—— ————— 2022 թվականի N ----- L

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի N 1332-Ն որոշման հավելված 2-ի 42-րդ կետի կիրարկման նպատակով՝

1. Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին և առաջարկել ինքնավար մարմինների և անկախ պետական մարմինների ղեկավարներին, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացնել կիսամյակային հաշվետվություն սույն որոշմամբ հաստատված հավելվածում ներառված գործողությունների կատարման մասին:
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց և ամփոփելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դրանց հրապարակումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Հայաստանի **Ն. Փաշինյան**

Հանրապետության

վարչապետ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կառավարության 2022

թվականի…. N … որոշման

ԾՐԱԳԻՐ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	**Գործողությունը**	**Հաղորդակցման եղանակները և միջոցները**	**Ակնկալվող արդյունքը 2022**
1.	Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերալ իրազեկման արշավների իրականացում	Հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակում	Հանրային իրազեկման հասարակությունը յուրա տեղեկացվում է Հակակ միջոցառումների իրակ արդյունքում ակնկալվո
2.	Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների իրավասությունների և գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ	Հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, տեղեկատվական	Տեղեկատվական նյութե հրապարակվում/վերահ հեռարձակվում/ցուցադ առնվազն 3 անգամ):

		նյութերի հրապարակում	
3.	Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության արշավի իրականացում	Հեռուստատեսությամբ և սոցիալական ցանցերում գովազդային տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, տեղեկատվական նյութերի հրապարակում սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներում	Ազդարարման համակա իրազեկում (յուրաքանչյ Ազդարարման մեխանիզ azdararir.am հարթակը), ընթացակարգի վերաբե առնվազն 4 անգամ: Ազդարարման դեպքերի սոցիալական ցանցերով միջոցներով (յուրաքանչ առնվազն 2 անգամ):

4.	Կաշառքի բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվական արշավ	Մեծ արշավի իրականացում 3 անիմացիոն տեսանյութերով, 5-6 պա ստառներով/արտաքին գովազդային վահանակներով, տեքստային հաղորդագրություններով	Կաշառքի բացասական տեղեկատվական արշա պաստառներ/արտաքին տեղադրվել/փակցվել Ե խոշոր համայնքներում:
			Տեքստային հաղորդագր բջջային օպերատորներ հաղորդագրությունների (viber, whats up, telegra 1 անգամ:

5.	Պետության հետ հարաբերություններում անձանց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում	Սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեղեկատվական նյութերի հրապարակում, տեղեկատվական թերթիկների օգտագործում:	Անձանց իրավունքների տեղեկատվական նյութ հրապարակվում/վերահ առնվազն 2 անգամ, տե են համապատասխան ընդունելու վայրում:
6.	Պետության հետ հարաբերություններում բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ իրազեկում	Սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեղեկատվական նյութերի հրապարակում	Պետության հետ հարաբ մեխանիզմների/ընթացք ամսական առնվազն 2 հրապարակվում/վերահ ցանցերում և պաշտոնա

7.	Գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումների և սեմինարների անցկացում:	Վերապատրաստումների և սեմինարների իրականացման միջոցով	Ընտրվել են այն մասնա անցկացվեն վերապատ
			Մշակվել են վերապատր թեմաները, դրանց անցկ
			Ընտրված մասնավոր ոլ վերապատրաստումներ մասնավոր ոլորտի աշխ կոռուպցիան, ինչ իրավ ունեն իրենք կոռուպցիո նկատելիս: